ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 671
ՔԱՐՈԶՆԵՐ

Թերթերը՝ 25:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 21.4×17.5×0.5 սմ.:— **Նյութը՝** դեղնած հատարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում եղել է աշակերտական տետրակի շապիկը, վրան Խ. Աբովյանի նկարով, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** ընկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հատ թուղթ է ավելացված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապսուն:— **Դատարկ թղթերը՝** 14բ, 17ա—17բ:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Նահապետ քահանա Մուրադյան, Ներքին Զեյվացի (հետագայում վարդապետ՝ 1946—1959 թթ.)—(1881—1959 թթ.): **Ժամանակը՝** 1928 թ.:— **Վայրը՝** Ներքին Զեյվա գյուղ (Էջմիածնի շրջան):— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրը գրված է Նահապետ քահանայի ձեռամբ, բայց վերջին մասը ուրիշ մարդ է գրած):

Թ. 1ա.— Կարմիր Վարդան
և Վարդագույն յիշատակներ:

Թ. 4ա.— Վասակի տադաստանը (բաց է թողնված):

Թ. 8ա.— «Աստված քավեսա զիս զմեղավորս».
Փարիսեցին և մաքսավորը:

Թ. 15ա.— Մի ընդանիքի պատմութիւն Տաճկահայաստանից 1975 թվից:

Պատմեց Մուշեղ Ղուգասեանը Բիթլիսի շրջանի Փրխուս գիւղացի, որ այժմ ապրում է Նազրվան գիւղում:

Թ. 15բ.— Գլուխ 1:

Թ. 16ա.— Գլուխ 2:
Քուրտ Բեկը և իմ կնոջ ծնողները:

Թ. 16բ.— Գլուխ 3:

Թ. 18բ— Գլուխ 4:
Բիձա Միհնասը:

Թ. 20ա.— Գլուխ 5:
Անհավատարիմ կինը:

Թ. 21ա.— Գթասիրտ արջը:

Թ. 22ա.— Հոր Մանգասարի պատմածը:

Տաճկահայաստանի Վանի շրջանից Հարութիւն Բիձա, գաղթել է 1915, այժմ ապրում է Ղզլարում I Սովխոզում, ունի 5 տղա 3 աղջիկ, և բարվոք վիճակի մեջ:

Հարութիւն Բիձի պատմութիւնը իր կեանքից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 25ա.— 1928 թվին
Հայ Զեյվա
Տէր Նահապետ:

№ 672
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 31:— **Պրակները՝** 2:— **Մեծությունը՝** 28.2×17.7×0.4 սմ.— **Նյութը՝** դեղնած հատարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում եղել է աշակերտական տետրակի շապիկը, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հատ թուղթ է ավելացված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապսուն:— **Դատարկ թղթերը՝** 30ա—31բ:— **Տողերը՝** 24:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Գրիչը՝** Նահապետ

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № Է-ից:

քահանա Մուրադյան (հետագայում վարդապետ)— (1881—1959 թթ.):— **Ժամանակը՝** 1940 թ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Կողպեցի Հուրիտ:
Թ. 2ա.— Հարսանիք:
Թ. 4բ.— Իմ նամակը Տիգրանին:
Թ. 5ա.— Հորս մահը և կեղծ կտակը:
Թ. 5բ.— Գիւղի պարավոն 1907:
Թ. 6ա.— Գեվորքի վարմունքը հորս և մորս հետ:
Թ. 6բ.— 1907 թ.:
Թ. 7ա.— 1908 թ.:
1909 թ.:
Թ. 9ա.— 1909 թ.:
Չորրորդ տասարանի վկայական ստանալս:
Թ. 9բ.— 1913 թվին Տիգրանի մահը:
Թ. 10ա.— Եղբայրների բաժանվելը:
1914 թ. համաշխարհային պատերազմը:
Սամարղանդ գնալս:
Թ. 12բ.— Սամարղանդում ծառայությանս ժամանակվա անցքերը:
Թ. 14ա.— Սամարղանդի կյանքը 1915 թ. 1916 թ.:
Թ. 14բ.— 1917 թվի աշնանը:
Թ. 15ա.— Սուջուխ ծախելը:
Թ. 15բ.— Բաքու գնալը:
Թ. 16ա.— 1918 թվի գարնանը:
Թ. 16բ.— 1918 թվի գաղտը:
Թ. 17բ.— 1919 թ.:
Թ. 18ա.— 1919 թ. աշնան:
Թ. 20ա.— 1923 թվին:
Թ. 21ա.— 1923 թ. հողաչափությունը:
Թ. 21բ.— 1924 քարտուղարություն:
Թ. 22բ.— 1925 թ.:
Թ. 23բ.— Տ. Կարապետին վերադարձը Սամարղանդից:
Թ. 24բ.— Տ. Կարապետի հրաժարումը գյուղից:
Թ. 25բ— 1925 թ.-ից մինչ 1930 թ. կյանքը:
Համատարած կոլեկտիվացումը 1930 թ.:
Թ. 28բ.— 1935 թիվը գյուղում:

№ 673
ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 36:— **Պրակները՝** 3:— **Մեծությունը՝** 22.6×18.3×0.3 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում ունեցել է տետրակի հասարակ շապիկը. իսկ 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հաստ թուղթ է ավելացված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 29ա, 30ա և 36ա:— **Տողերը՝** 21:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Նահապետ քահանա Մուրադյան (հետագայում վարդապետ)— (1881—1959 թթ.):— **Ժամանակը՝** 1940 թ.:— **Վայրը՝** Երևան:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Մեր տոհմի ծագումը:
Թ. 1բ.— Զեյվեցի Սափոն:
Թ. 3ա.— Ծննունդ:
Թ. 6ա.— 1890 թ. ամառը գյուղում:
Թ. 6բ.— 1891 թվին Երևանում:
Թ. 9բ.— 1904—1905 թվ. ուսումնական տարին:
Թ. 10բ.— 1905 թ.:
Թ. 11ա.— 1906. Հակոբը բաժանում է իր տղերքին:
Թ. 11բ.— 1907 թ. դեպքերը:
Թ. 12ա.— Գյուղի խանութի հանձնումը:
Դավիթ և Ավետիս:
Թ. 13ա.— 1899 թ. Սիրահարության բորբոքումը:
Թ. 14ա.— Եկավ աշունը:
Թ. 14բ.— Ծածուկ նշանատությունը. և խանութի դրությունը:
Թ. 15բ.— Աներներին ոգնություն տալը:
Թ. 21ա.— Ծածուկ նշանադրության բացվելը:
Թ. 24բ.— Իմ խելագարությունը:
Թ. 26ա.— Նշանատրություն:
Թ. 27ա.— Գյուղի գույքը:
Թթ. 32բ—34բ.— (Տրվում է նյութերի ցանկը և էջերի համարները:)
Թթ. 35ա—35բ.— (Ձեռագրի հեղինակը տալիս է իր կյանքի որոշ դեպքերի ցուցակը և տարեթվերը՝ 1896—1909 թթ. ներառյալ:)
Թթ. 29բ, 30բ—32ա և 36բ.— (Այստեղ հեղինակը տալիս է բարոյախոսական հակիրճ որոշ մտքեր, առաքինությունների և բարոյականության մասին կարճ դրույթներ և խրատներ: Ստորև տրվում են մի քանի օրինակ միայն:)
Թ. 30բ.— Այսորվա ուսանող կոչողները վաղը նրանց տրորելու են իրեն գարշապարի ներքո:
Թ. 31ա.— Մեկ լավ մայրը հարյուր դպրոցական վարժապետի գին ունի:
Թ. 31բ.— Մանկության հիշատակները հայելու նման են:
Լավ մահը, վատ կյանքից պատվական է և ցանկալի:
Թ. 36բ.— Ուրիշների հաշվով ապրող մարդը՝ վոչ միայն անազնիվ է, այլ գործով խարեբա:

№ 674
ԳԵՂԱՐԴԻ ԴԷՊՔԵՐԸ

Թերթերը՝ 56:— **Պրակները՝** 3, անհամաչափ:— **Մեծությունը՝** 21.6×16×1 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում ունեցել է տետրակի՝ հասարակ շապիկը, իսկ 1983 թ. օգոս-

տոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հաստ թուղթ է ավելացված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ և 52բ—56բ:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Նահապետ վարդապետ Մուրադյան (1881—1959 թթ.):— **Ժամանակը՝** 1950 թ.:— **Վայրը՝** Ս. Գեղարդա վանք:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— (Տրված է նյութերի ցուցակը և էջերի համարները:)

Թ. 2ա.— Նախկին Եզնիկ վարդապետ Ազնավորեանի գործերը ...

Թ. 11բ.— Մանուկ Հովհաննիսեանի վարվելակերպը Գեղարդում:

Թ. 13ա.— Մանուկի ուրախ ժամանակի երգերից և կատակներից:

Թ. 13բ.— Մանուկի անբարոյական խոսքերից:

Թ. 15ա.— Մանուկի վերաբերմունքը վանահոր հետ:

Թ. 15բ.— Մանուկի կատարած զրպարտութիւն-ներ(ը) վանահոր վրա:

Թ. 23բ.—Մանուկի խաբեբայութիւնները վանահոր վերաբերյալ:

Թ. 26բ.—Մանուկի լկտի հայտարարությունները հրապարակով:

Թ. 28բ.—Մանուկի զարմանալի խոսքերից:

Թ. 34ա.— Մոմերի մասին:

Թ. 35ա.—Վանահայր Նահապետի հարսի դեքքը:

Թ. 43բ.—Մանիեայի խոստովանութիւնը:

Թ. 44բ.— Վանահոր կարծիքը իր հարսի մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Արտագրված է
1950 թ. Գեղարդում ապրիլ ամսից.
Նահապետ վարդապետի մուտքերի և ելքերի մադեանից և զեկուցագրից Վեհափառին:

№ 675
ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

Թերթերը՝ 28:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 16.1×10.3×0,6 սմ.:— **Նյութը՝** շատ հասարակ դեղնած թուղթ:— **Կազմը՝** սկզբում չի եղել, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում եղել է մեկական հաստ թուղթ սկզբում և վերջում, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հաստ թուղթ է ավելացված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—19ա և 26ա:— **Տողերը՝** 18—20:— **Գծումները՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Նահապետ քահանա Մուրադյան (հետագայում վարդապետ)— (1881—1959 թթ.):— **Ժամանակը՝** 1931—32 թթ.:— **Վայրը՝** անհայտ: **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սկզբի պահպանակի կոնակում գրված են 1932 թ. ամիսների անունները):

Թթ. 19բ—25բ.— (Այստեղ մատիտով գրված են Սայաթ-Նովայի, աշուղ Աշխուժի և այլոց ոտանավորները):

Թթ. 26բ—28ա.— (Այստեղ գրված են մի քանի խնդիրներ լուծելու համար:)

Թ. 28բ.— Հեռագրական ալֆաֆիտ (տրված է ռուսերեն այբուբենով):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի կոնակում գրված է)
1932 թ.:

Թ. 20ա.— 1931 թ. հոկտեմբերին:

№ 676
ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

Թերթերը՝ 96:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 20.3×17×1.1 սմ.: —**Նյութը՝** տետրակի դեղնած թուղթ:— **Կազմը՝** մոխրագույն բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական մոխրագույն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 3բ, 31բ և 84ա—94ա:— **Տողերը՝** 23: —**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Նահապետ վարդապետ Մուրադյան (1881—1959 թթ.): —**Ժամանակը՝** 1953 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 1բ—2ա.— Ծնունդ և մահ Նահապետ Մէլիք Մուրադեանի զավակների (Այստեղ տրված է գրչի հինգ աղջիկների, երեք տղաների և մեկ թոռան անվանացանկը և նրանց ծննդյան ու մահվան թվականները):

Թթ. 2բ—3ա.— Հակոբ Մէլիք Մուրադեան ծնվեց 1835 թ., վախճանվեց 1904 թ. 18 ապրիլին (Սա Նահապետ վարդապետի հայրն է: Այստեղ տրված է Հակոբի յոթ որդիների, չորս աղջիկների և մեկ թոռան անվանացանկը և նրանց ծննդյան ու մահվան թվականները):

Թթ. 4ա—83բ.— (Այստեղ ամփոփված են գրչի հեղինակած 119 ոտանավորները զանազան թեմաների մասին, որոնք գրված են 1915—1940 թթ.: Հա-

վաքածուն ընդգրկում է աշնան, գարնան, սիրո, կարոտի, տխրության, բնության, երիտասարդության, եղբայրներին, կնոջ, ընկերոջ, մահացած որդուն, աղջկան նվիրված ոտանավորներ: Կան նաև այլ ոտանավորներ նվիրված գրչի ծննդավայրին՝ Զեյվա գյուղին, լուսնյակ գիշերին, մարտում զոհված զինվորին, պանդուխտ ամուսնուն, որդեկորույս մորը, ազատության, գյուղացուն, փոթորիկին, կարկուտին, սոխակին և այլ բազմաթիվ և բազմազան թեմաների):

Թթ. 94բ—96բ.— (Տրվում է ոտանավորների ցուցակը և էջերը:)

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թթ. 1բ—2ա.— (Այստեղ երկու էջերի վերևում գրչի անունը հիշվում է այսպես)

Ծնունդ և մահ Նահապետ Մէլիք Մուրադեանի զավակների:

Թ. 2բ.— (Այստեղ գրիչը տալիս է իր եղբայրների և քույրերի ցուցակը և նրանց ծննդյան ու մահվան թվականները: Տրվում է իր Սեդրակ եղբոր թվականները՝ 1873—1953, որով պարզվում է, որ ձեռագիրը շատ հավանաբար գրված լինի 1953 թ.:)

Թ. 4ա.— 1935 թ. Մարտի 25-ին:
Թ. 5ա.— 1930 թ.:
Թ. 6ա.— 1920 թ.:
Թ. 7ա.— 1940 թ.:
Թ. 12ա.— 1915 թ.:
Թ. 78ա.— 1931 թվի:
Թ. 79ա.— 1933 թվին:
Թ. 80բ.— 1922 թ. Հոկտեմբեր (նույնը՝ 81ա-ում):
Թ. 82ա.— 1922 թ. Նոյեմբեր (նույնը՝ 83ա-ում):
Թ. 82բ.—1922, 5 դեկտեմբերի:
Թ. 83բ.— 1922 թ.:

№ 677
ՊԱՏԱՐԱԳ

Թերթերը՝ 31:— **Պրակները՝** 2, Ա՝ 16 և Բ՝ 15 թերթից են բաղկացած:— **Մեծությունը՝** 30.7×24×1.4 սմ.:— **Նյութը՝** մաքուր հաստ գծավոր թուղթ:— **Կազմը՝** հեղինակի սկզբնական երկու պրակներն ունեն կանաչավուն շատ բարակ ստվարաթղթից բաղկացած կազմ: Հետագայում հեղինակի որդին երկու պրակները կազմել է տվել, որպես մի մատյան, որի անկյունները սև կաշեկազմ է, իսկ մնացած մասը երկնագույն լաթակազմ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում 10-ական թերթ սպիտակ հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապլան:— **Դատարկ թղթերը՝** 24բ—31բ:— **Տողերը՝** 12:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է, նոտայի հինգ տողանոց գծավոր թուղթ:— **Գիրը՝** շեղագիր և եվրոպական արդի նոտագրություն:— **Զարդագրությունը՝** չունի:— Մատյանի սկզբում կա միայն գրչի լուսանկարը 12×8 սմ. չափերով:—**Գրիչը՝** Լևոն Մարտիրոսի Չիլինկիրյան (1862—1932 թթ.):— **Ժամանակը՝** 1920-ական թթ. (1922—32 թթ.):— **Վայրը՝** շատ հավանաբար Երուսաղեմի հայոց Ս. Հակոբ վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագրի հեղինակի կրտսեր որդին՝ Նորայր Լ. Չիլինկիրյանը Լոնդոնից Մայր Հայրենիք կատարած իր այցելության առթիվ 1969 թ. սեպտեմբերի 6-ին արժեքավոր այս մատյանը նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ի զգեստաւորիլն քահանային:
Թ. 1բ.— Շարական խնկարկութեան:
Թ. 7ա.— Սրբասացութիւն:
Թ. 9ա.— Ի հանդիսաւոր աւուրս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 24ա.— Լևոն Մ. Չիլինկիր(եան):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա մի փոքրիկ սև խաչ է նկարված և գրված է հետևյալը.)

Ս. Պատարագի երգեցողութեան
Եռաձայն դաշնաւորում
Լևոն Մ. Չիլինկիրեանի:

(Սկզբի պահպանակի Բ. էջի վրա կա հեղինակի լուսանկարը, իսկ ներքևում գրված է հետևյալը.)

Լևոն Մարտիրոս(ի) Չիլինկիրեան
(25 Դեկտ. 1862—10 Հոկտ. 1932):

(Սկզբի պահպանակի Գ—Ը վեց թերթերի վրա կպցված է վեց թերթեր, որոնց վրա մեքենագրված է մատյանի հեղինակի կենսագրականը, որի վերնագիրը հետևյալն է.)

Լևոն Մարտիրոս Չիլինկիրեան
25 Դեկտ. 1862—10 Հոկտ. 1932
Համառօտ կենսագրութիւն
(Առաջին պրակի շապիկին վրա գրված է)

Ա.

(Երկրորդ պրակի շապիկին վրա գրված է)

Բ.

(Մատյանին կցված է մի նամակ, գրված Երևանում 6 սեպտեմբերի 1969 թ. հեղինակի որդու կողմից, որի բովանդակությունը տրվում է ստորև.)

Երևան, 6 Սեպտ. 1969.

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Առաքելաշնորհ և Արժանընտիր Հայրապետ և Ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց և Գահակալ Արարատեան Նախամեծար ու Նուիրական Մայր Աթոռոյ ի Ս. Էջմիածին.
Վեհափառ Տէր.

Հանգուցեալ հօրս, Լևոն Մարտիրոս Չիլինկիրեանի մահէն վերջ, մեծագոյն փափաքս եղած էր Ս. Պատարագի Սրբազան արարողութեան իր դաշնաւորած հինգ տարբեր եռաձայն երգեցողութիւններէն իր նախասիրած և ամենավերջին դաշնաւորումին

ձեռագիրը նուիրել Ս. Էջմիածնի: Այս յայտնած էի նաև գրեթէ 60 տարիներէ իվեր Միացեալ Նահանգներու Oklahoma քաղաքը հաստատուած մեծ եղբօրս, որը դժբախտաբար այլևս մոռցած իր մայրենի փառապանծ լեզուն և հեռացած է Հայ Առաքելական Ս. Եկեղեցիէն, բայց միշտ հպարտ Լևոն Զիլինկիրեանի անդրանիկ զաւակը ըլլալուն. գոհունակութեամբ և մեծ ուրախութեամբ իր անվերապահ հաւանութիւնը յայտնած էր, միայն խնդրելով որ photostat օրինակ մը իրեն որկեմ որպէս յիշատակ, ինչ որ սիրով կատարեցի օրինակ մըն ալ պահելով իմ մօտս:

Որքան ալ ծանր ու դժուար պարագայ մը եղած ըլլար բաժնուիլ հանգուցեալ հօրս և մեր ընտանիքին համար այդ ամենաթանկագին յիշատակէն, բայց ունենալով գիտակցութիւնը որ հանգուցեալը որպէս նուիրուած ծառայ և մշակ մը Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ երաժշտութեան մարզին մէջ, որուն հաւատարմօրէն և մեծ նուիրումով ծառայած է աւելի քան կէս դար. վստահ եմ որ իր ալ փափաքը պիտի ըլլար որ իր համեստ աշխատութեան օրինաւոր տէրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պէտք էր ըլլար և կորուստի մատնուելու վախէն զերծ և ապահով վայրը՝ Ս. Էջմիածինը:

Օգտուելով իմ պաշտելի Հայրենիքս, Սովետական Հայաստան այս առաջին այցելութենէս և Ս. Էջմիածին ուխտի գալէս. տարիներու ամենաջերմ փափաքս իրականացած ըլլալու երջանկութեամբ, ուրախութեամբ և խորին ակնածանքով զայն կը յանձնեմ Ձերդ Սրբութեան որպէս դոյզն նուէր մը մեր ընտանիքէն, հրաժարելով նաև օրինաւոր ժառանգորդը ըլլալէ հեղինակի մը բոլոր իրաւունքներէն: Վստահ եմ, որ այս նուիրական պահուն հանգուցեալ Հօրս բարի հոգին ալ կը հրճուի ինչպես ես ալ կզգամ խղճի կատարեալ հանդարտութիւն կատարած ըլլալով պարտականութիւն մը:

Վեհափառ Տէր, թախանձագին պիտի խնդրէի Ձերդ Սրբութենէն որ հաճէիք օրհնել իր յիշատակը:

Հաւատացեալի մը բոլոր ջերմեռանդութեամբ կաղօթեմ և կը հայցեմ Բարձրեալին որ արևշատութիւն, առողջութիւն և երկար, շատ երկար կեանք պարգևէ Ձերդ Վեհափառութեան որ Հայ Ազգն ու Հայաստանեայց Ս. Եկեղեցին շատ ու շատ տարիներ տակաւին վայելէ Ձերդ Սրբութեան ներկայութիւնը Ամենայն Հայոց Հայրապետական Ս. Աթոռին վրայ, անվհատօրէն շարունակելու այնքան մեծ նուիրումով Ձերդ Սրբութեան ձեռնարկած եկեղեցաշէն և ազգօգուտ աշխատութիւնները և ընդունելու Ձերդ Վեհափառութեան Հայրապետական օրհնութիւնները: Կաղօթեմ նաև որ Աստուած անսասան պահէ մեր ազգն ու Հայ Առաքելական Ս. Եկեղեցին:

Որդիական ակնածանքով ու երկիւղածութեամբ ծնրադիր կը մատչիմ Ձերդ Սրբութեան Օծեալ և Օրհնեալ Ս. Աջոյն:

Ձերդ Վեհափառութեան հաւատարիմ և խոնարհ ծառայ՝

Նորայր Լ. Զիլինկիրեան:

№ 678

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 212:— **Պրակները՝** 14, յուրաքանչիւրը 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 23×16.2×2.8 սմ.:— **Նյութը՝** դեղնած թուղթ:— **Կազմը՝** կապույտ լաթակազմ հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կանաչավուն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 17բ, 33բ—35բ, 51բ—52բ, 68ա—69բ, 86ա—86բ, 102ա—103բ, 119բ—120բ, 136բ—137բ, 153ա—154բ, 170բ—171բ, 187ա—188բ, 204բ և 208ա—212բ:— **Տողերը՝** զանազան՝ 6—28:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ասողիկ վարդապետ Ղազարյան (հետագայում արքեպիսկոպոս)—(1909—1978 թթ.):— **Ժամանակը՝** 1940—41 թթ.:— **Վայրը՝** Խարբին և Զինաստանի մի քանի այլ քաղաքներ (Շանհայ, Դայրեն, Ցիցիքար, Սինչեն, Մանչուրիա, Հայլար, Սինքինկ և Պուխետու):— **Մանրագրություն՝** սույն ձեռագիրն ստացված է 1983 թ. օգոստոսի 16-ին Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Մատյանը պարունակում է Ասողիկ վարդապետ Ղազարյանի օր-օրին գրանցած օրագրությունը 1940 թ. հունվարի 1-ից մինչև 1941 թ. հունվարի 14 ներառյալ (թթ. 2ա—207բ): Ստորև տրվում են մի քանի հետաքրքիր նշումները միայն:)

Թ. 18ա.— Մոնկոլական սովորութիւնք:

Մեռելները չեն թաղեր երբեք, երկու ձիով կառքի մը վրայ դնելով կը վազցնեն ձիերը, դիակը ուր որ կառքէն իյնայ. հոն կրօնական արարողութիւն կը կատարեն և կը թողուն որ հոն գազանները և գիշատիչ թռչունները գիշատեն: Օրինաւորապէս միակին են, բայց յարաբերութիւնը ազատ է երկու սեռերուն իրարու հետ: Աղջիկը կը ծախեն: Վար ցանք չեն ըներ: Կենդանիները չեն մորթեր, սատկածները միայն կուտեն:

Կրօնական զգացումը և պաշտամունքը շատ նախնական ու զօրաւոր է անոնց մէջ: Պուտայական են: Գողութիւն և աւազակութիւն չկայ մէջերնին, պարկեշտ ու հաւատարիմ են: Մաքրութեան մասին գաղափար չունին:

Թ. 26բ.— (16 փետրվարի 1940 թ.)

Դարձեալ մեր փոքրիկ Հայրենիքի շուրջ սատերազմի մը արհաւրալից շշուկները կը լսուին: Երկու հզօր ճակատներու միջև պատերազմի մը սպասարէզը լինելու երկիւղը այժմէն կը խռովէ մեր հոգիները, սակայն խաղաղութեան ու արդարութեան Տէրը ինքը տեսցէ և այց արասցէ, որ մէկը որ բարին է նա կատարեսցէ:

Թ. 90ա.— (Պուխէտու, 7 հունիսի 1940 թ.)

Երևկոյան ընթրիքէն ետք կը պատրաստուէինք ճամբայ ելլել, ոստիկան մը եկաւ և մեզի ոստիկանատուն առաջնորդեց, անոր համար որ անցագիր-

նիս չէինք ներկայացուցած կեդրոնական ոստիկանութեան։ Ոստիկանապետի հրամանաւ մեզի վար որին բանտի մէջ իբր պատիժ, ժամանակը ուշ ըլլալուն և յանկարծակի գալուս ոչ մէկ փորձ կրցի ընել փրկութեան և համակերպեցայ տեղական իշխանութեան անիրաւ խստութեան, որ միմիայն անգլիահպատակ լինելուս համար կը պարտադրուէր սոյն բանտարգելութիւնը, որ կեանքիս մէջ առաջինն է։ Չափէն աւելի ջղագրգիռ և յուզուած, գիշերը ամբողջ արթուն անցուցի բանտի ցուրտ տախտակամածին վրայ, երկու չինացի ոջիլոտ ընկերներուս հետ միասին, որ երբեք պիտի չմոռնամ։

Թ. 90բ.— (Պուխէտու, 8 հունիսի 1940 թ.)

Առտուն ժամը 10.30ին մեզի բանտէն հանեցին. երկար հարցապնդումներէ և մանրամասն կենսագրութիւնս առնելէ ետք ազատ արձակեցին ձեռքի սեղմումով մը։ Այս նուաստացուցիչ դէպքը ճաբոնական կառավարութեան կողմէ եղած, մեծ ցաւ պատճառեց ինձի, որ կրօնականի մը հանդէպ այսպէս անբարեացակամ վերաբերում ցոյց տուին։

Թ. 177բ.— (Խարբին, 12 նոյեմբերի 1940 թ.)

Պատերազմները մեծ թափով յառաջ կերթան առ այժմս դեռ Եւրոպայի մէջ։ Տէր տեսցէ և այց արասցէ իւր արարածներուն, որոնք կը տառապին յերեսաց անողորմ պատերազմին, գրեթէ ամենուրեք։ Մեծագոյն աղէտն է որ կսպառնայ այժմ աշխարհին ամբողջ մարդկութեան, քան երբեք եղած լինի ի սկզբանէ ցայսօր։

Թ. 201ա.—(Խարբին, 25 դեկտեմբերի 1940 թ.)

Գաղութիս ազգային կեանքը ողբալիօրէն անմխիթարական է. խենէշ կեանքը որ մինչև անբարոյութեան ու անկումի մեղսապարտ աստիճանները կը հասնին, վարակած են նաև դժբախտաբար մեր ժողովուրդի մեծագոյն մասը։ Շատոնց արդէն մոռացուցած են մեր ընտանեկան ու նահապատեկան մաքուր ու սուրբ կեանքը, անոնց հետ նաև և մեր ազգային լեզուն, մանաւանդ նոր սերունդի մէջ իսպառ մոռացուցած ու անտարբեր այն ամէն բանի հանդէպ որ ազգային է, ազգային իտէալէ դատարկուած ցոփ սերունդ մըն է, որ յառաջ կուգայ տակաւ առ տակաւ։ Խորապէս կսկծեցուցիչ է ապագան այս պայմաններու մէջ։

Թ. 204ա.— (Խարբին, 31 դեկտ.ի 1940 թ.)

Անցեալը տխուր և աշխարհի ու ազգերու համար բերաւ լացի, կոծի, աւերներու և պատերազմի անաւոր տարի մը։ Իցիւ թէ իր հետը տանէր նաև այդ բոլորը և նորը բերէր ուրախութեան, սիրոյ և խաղաղութեան յոյսերով բեղուն տարի մը և ամոքեր տառապած մարդոց վիշտերը և սրբեր թախիծով ու արցունքով լեցուած մեր սիրտերը ու մանաւանդ մեր անտէրունջ ազգին պարգևէր բարօրութիւն, յոյսի և լոյսի նոր արշալոյս մը ծագէր ու մեր դարաւոր ստրկութեան և թափառական կեանքին վերջ մը ըլլար, հաւաքուէր ազգիս անտէրունջ բեկորներն ալ իր հայրենի հողին և հայրենի երդիկին տակ իրեն ուրոյն և ազատ կեանքը ապրէր, ինչպէս ուրիշ ազգեր։

Այս է իմ փափաքս և մաղթանքս տարւոյն վերջին ժամուն և նոր տարւոյ շեմին առաջ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Օրագիրս
Ստացուած նուէր Տիար Հայկ Ասատուրեանէ
Նոր Տարւոյ առթիւ։
Ա. Վ. Ղազարեան։

Թ. 3բ—ԱՎՂ
(Ասողիկ վարդապետ Ղազարեան—Ն. Մ.)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի վրա գրված է)

ESCO Indexed DIARY
1940
Kelly & Walsh Ltd.
Shanghai, Hongkong
Singapore.

(Ձեռագրում կա փոքրիկ մի թղթակտոր, որի մեկ երեսին 4—5 տող չինարեն է տպված, իսկ մյուսում էլ Ասողիկ վարդապետի ձեռագրով տեղաբնակ ինը հայերի անուններն է գրված)

Պասկանլեան
Սողոմոնեան
Տէր Յակոբեան
Անանով
Պասկեան
Սաֆարեան
Յակոբ Յակոբեան
Քանանեան
Կ. Կասկանլեան։

№ 679
ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 2 կտոր։— **Մեծությունը՝** Ա՝ 361×7.7 սմ. և Բ՝ 158×7.7 սմ.։— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միապյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ։— **Տողերը՝** Ա=487 և Բ=152 տող։ — **Գծումները՝** մատիտով։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրությունն՝** ձեռագրում կան ջրաներկ բազմաթիվ սիրուն նկարներ, այսպես օրինակի համար Ներսես Շնորհալին, Մատթեոս ավետարանիչը, Գրիգոր Նարեկացին, Քրիստոսն ու չորս հրեշտակները, խաչյալ Հիսուսը, հրեշտակն ու սատանան և այլն։ Կան բավական գեղեցիկ հինգ թռչնագրեր և երեք զարդագրեր։— **Գրիչը՝** վանեցի տիրացու Հովհաննես։— **Պատվիրատուն՝** Մարիամ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1804 թ.։ **Վայրը՝** շատ հավանաբար Վան։— **Ծանոթագրությունն՝** սույն համայիլը դուրս է եկած Մայր Աթոռի արխիվից։ Վերափոխ Հայրապետն այն հանձնեց ձեռագրատուն 1983 թ. սեպտեմբերի 7-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հավատով խոստովանիմ:
2. Աղօթք սբյն Բեռնարդոսի աբբայի քաղցրաբան վարդապետի:
3. (Մեջբերումներ չորս Ավետարաններից:)
4. Աղօթք զօրաւոր սբյն Գրիգորի Նարեկացւոյն առ սբ Աստծին:
5. Մաղթանք սրբոյն Աթանասի Աղէկսանդրու Հայրապետին:
6. Աղօթք սբյն աբբայ Եփրեմի Խորին ասորւոյ:
7. Աղօթք սբյն Յօհաննու Դամասկացւոյն:
8. Աղօթք կապանաց դիւաց կախարդաց և աղանդաւորաց և վս դատաստանի յաջողելոյ:
9. Աղօթք վասն Թպղայի և ալի որ ոչ մերձենայ ի ծառայս Այ (երկու անգամ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1. Եւ լիցի պարիսպ և պահապան ծառայիս Այ Սարիամին (երկու անգամ):
2. ...խաղաղութի շնորհեա Տէր մոլորեալ ծառայիս, Տր մեղայ ողորմեա:
3. Այցելու և պահապան եղիցի ծառայիս Այ Մարիամին:
4. Եւ լիցի բժշկութի ծոյիս Այ Մարիամին:
5. Եւ լիցի պահապան ծառայիս Այ Մարիամին:
6. Եւ եղիցի պահապան և օգնական ծոյիս Այ Մարիամին, ամէն:
7. Եւ լիցի պահապան և օգնական ծառայիս Այ Մարիամին:
8. ... եղիցի օգնութի և բժշկութի ծառայիս Այ Մարիամին:
9. ... ի դիմաց ծառայիս Այ Մարիամին:
10. Գրեցաւ ազնիւ պահպանութե գիրս ձեռամբ վանեցի անարժան և մեղապարտ տիրցու Յօվհաննէսի, ի թվականիս հայոց ՌՄԾԳ (1804 թ.—Ն. Մ.) մարտի ԺԵ (14): Աղաչեմ ի ձէնջ յիշէք զիս և Աստ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի երկրորդ՝ կարճ կտորի սկզբում և վերջում կա սև մեծ մի կնիք, 4 սմ. տրամագծով, որի վրա գրված է հետևյալը)

Ռաբաէլ
Գաբրիէլ
Ուրիէլ
Միքաէլ:

(Այս չորս անունները գրված են շրջանակի չորս կողմում, իսկ կենտրոնում 30 փոքրիկ քառակուսիներում զանազան տեսակի նշաններ կան, որոնք ո՛չ թիվ են, ո՛չ էլ գիր):

(Շարունակելի)